

**ՀՐԱՄԱՆ ԱՌԱՋՈՒՅԹԻ ՆԱՐԱԿԱՆԵՐԻՑ  
ՎԻԵՆԱՅԻ ՄԻԽԱՐԵԱՆՆԵՐԻՆ**

## ՀՐԱՄԱՐԴԱԿՈՂ ՄԱՐՏԻՐՈՒ ՄԻՆԱՐԵԱՆ

19.

[Umriss 1 1922, Baulich]

## ԳԵՐԱՎԱՐԻՒԹՅՈՒՆ. ՀԱՅՐ,

Ստացայ Զեր երկրորդ նամակը (օգ. 27) և հետո ալ Հ. Վարդանեանի 3 հասարիկները<sup>1</sup>. Հ. Տաշեանի Ալիբաւելը և իմ Հայոց գրեռու փորձերը (մինչև էջ 256-րդց 3րդ մասուց պակաս էր). շնորհակալութիւն այս բոլորի համար: — Հ. Վարդանեանի ամբողջ յօդուածները արդէն բառաքազած և անցուցած էի մեծ արմատական բառարանիս մէջ. ուստի, որպէս զի տշխատութիւնս նորէն չկրկնեմ, կիսնդրեմ յոյաներ ինձ թէ այս աբասապատիքները լիակատար կերպով նո՞յն են Հանդէսի մէջ ապուածներուն հետ: Եւ եթէ քանի մը ոռղ աւելցուած է, յատկապէս կիսնդրեմ որ այդ առողերը, երէ կարելի է, էջով ևն. յիշեցնէք ինձ:

Նոր Բայազէտի ցուցակս եթէ տպուեցաւ, հատ մը կինդրեմ գրկել ինձ: Խոկ  
թէ Թրանի ցուցակս այնքան փոքր բան է, որ կարծեմ Հանդէսի մէկ կամ առառա-  
ւելի երկու թիւսվ կվերջանայ: Աւսաի շատ կինդրէի որ այն ալ օր առաջ տպէիք  
գերջացնէիք, փոխանակ ապասելու որ Պարսկաստանի միւս այլ ցուցակներն ալ  
տպուինս Մէկ մամուլէ բաղկացած պրակ մը պիտի ըլլայ կարծեմ:

Տեղում է այլուր տպուած գրքերէն արդէն հաւաքեցի 32 կառ և երէկ ուղարկեցի ապահովեալ կապոցով, որսոց ցանկը հետևալին է. տեսէք թէ պակաս չէ՞՝ Արևո զիրէ, Տիղիկազիր Նոխիշիւանի . . . Մրազիր զաւ. (Բազու, 1917, Թիֆլիս, 1917), Հայ առօնասահմանականի միուրին, Հաւի հայ. կառավարութեան (Թաւրիզ, 1921), Տիղեկ. աղջած. բնկ., Ազատ Սիւնիք № 9-11, Հայոստան (աշխարհագրական թղթական հազար), Եսպուն Բագրատունի, Առուց Չարբան, Խենք Մեսկի, Զօկի ցօրենի., Ազար չի. Ազատ Սիւնիք, Հոգեւոր երգեր, Կորած բառը, Կուօն եւ բարոյական, Երկու գերվիթ, Աւ- պերա, Լոյսից դեկափ խաւար, Ամիսն Բագդէի Մրմնեցներ, Աօրդ Թառի, Զիւժի երգեր, Այս գրադարանի գրքոյները № 1-6 և 8-10\*.

Ասոնցմէ գուրս առ այժմ ուրիշ գիրք չկայ հռո տպուտծ:

Գրքերէն ոմանք հեղինակները նուիրած էին ինձ, ես ալ Զեզ կնուիրեմ. ուրիշներ հեղինակներէն նուէր առած եմ բռնի Զեր անունով. միւսները գնած եմ, սրոնք որ վաճառելի են, և իմ կողմէ կնուիրեմ Զեզ:

Թերթերէն Այդ, Մինաւէր և Զալից<sup>10</sup> գեռ չեմ զրկեր, որովհետեւ առաջինը և երկրորդը թէն ամբողջ, բայց երրորդը չատ պակաս է. գլխաւոր պատճառն այս է, որ երեք արքի առաջ, երր առաջինները եկեր են Թարիզ, ամէն մարդ իր ունեցած գրքերն ու թերթերը ոչնչացուեցեր է. այսպէս և Զանգը: Յոյս ունիմ որ մաս ժառինած ձնոք բերել: Օրինակ մը կայ միարդին խմբագրին քով, Կովկասի թերթերէն և գրքերէն բան մը չեմ կրնար զրկել, որովհետեւ յարաբերութիւն չկայ. Զանգիզուր հրատարակուած «Ազատ Սիրիա»<sup>11</sup> թերթէն Յ թիւ կրցայ ճարել փախստականի մը ձեռքէն և Կուզարկեմ Զեզ: Պորիս ապուած Արևոս գիրի<sup>12</sup> լաւ զանցեցէք, որովհետեւ, ինչպէս լուծ եմ, բայց էինքները<sup>13</sup> ամբողջ հաւաքեր և այրեր են. ասիկա մազապուր պատառած օրինակ մըն:

Թանի մը որ առաջ ապահովեալ զրկեցի Շեւրապական բաներ յօդուածա<sup>14</sup>, որ կրնայ Ազայ. Մասենաղարանին մէջ կոկի հասոր մը կազմել: արտատպութեան մէջ խնդրեմ գնել իսուլերէն յառաջաբանս, որ իմ գրածն է. պէտք չկայ իսուլերէն գիտողի մը սրբագրել առաջ, որովհետեւ, ինչպէս պիտի նկատէք, ես հռո արգէն գիտուն իսուլացիի մը սրբագրել առած եմ: Յատուկ ուշագրութիւննիդ կիսդրեմ թուրքերէն բռներու ապագրութեան:

Ցեղս հրատարակուուղ թերթեր իրենց թուերէն ուղարկել սկսեր էին. բայց սրովհետեւ հասած չէ Զեզի, ես խնդրեցի որ պահեն և ամէնը մէկտեղ ինծ տան, ապահովեալ ծրարով են զրկեմ:

Հանդէսի 1921[6] թուերը շատ կիսկատար կուտան. ապահովեալ չըլլալուն պատճառաւ նամքան հկարոսուի[7]. ժամանակ մը յետոյ ես պիտի խնդրեմ որ բոլոր կորուսած թուերս ապահովեալ ուղարկէք. առ այժմ ստացած եմ 1921, թիւ 1-2, 5-6, 9-10, «Հայոց գրերը» իմ ուղարկած նոր յօդուածով չէ վերջացած. կոսր մը դեռ կայ, կործ ժամանակէն այս ալ կրկեմ. կապուսեմ իշմիածնի շնորհական ժողովածուին<sup>15</sup>, որ Հայաստանի կոմիսարէն<sup>16</sup> խնդրուծ եմ տունձին նամակով:

Նոր-Զուղա կայ 250 ձեռագիր, որ Մերտաս սարկաւագ ցուցակագրենք, բայց տպուտծ չէ գեռ (ռուսերէն է). Եթէ գրէք Մոսկուս, իմ կողմէս բարեներ հաղորդեցէք պր. Յովն. Պալեանսին և յայտնեցէք թէ եսս կայ ամէն ապահովութիւն և եթէ ուզէ կրնայ գալ և հանգիստ կետնք վորել: Կեանքք առած և աժան է,

Տաղարանս<sup>17</sup>, ինչպէս ըսած եմ, կդտնուի Բագու. ուստի սկզ գիտէ գեռ ինչ-քան պիտի սպասենք, որ կանոնաւոր հաղորդակցութիւն սկսի և ես ալ կարող ըլլամ զրկել Զեզ, մանաւանդ որ շատ մեծածաւալ գործ է: Տաշեանի Յուցակէն<sup>18</sup> աւելի հասած է և մեծ: — Հայ առաջացներու բով պատահած ամբողջական պրս. կամ թրք. տողերու նամար կարծիք յայտնած էիք թէ անոնք բանաբազութիւններ են ժամանակից պարսկէ և թուրք բանաստեղծներէ: Եթէ ասիկա առանձին քննութեամբ հաստատած էք, խոսք չունիմ. բայց եթէ ա priori կենթագրէք, կներէք որ հակառակ կարծիք յայտնեմ: Մեր նոր վկայի<sup>19</sup> մէջ տեսած էք անշուշտ տաղեր ուր նոյնպէս թրք. և պր. տողեր կան. յատկապէս Ասուուածատուր Աթայեցւայն մէջ<sup>20</sup>. կարելի չէ ըսել թէ այս առղերը պրս. և թրք. բանաստեղծներէ առաւած ըլլան, սրովհետեւ ոչ մի պրս. և թրք. բանաստեղծ երգած չէ Աթայեցին. ուստի պէտք չըսել թէ այսպիսի տողեր գրելը բանաստեղծական ճարտարութիւն մ'էք, Սոյսակ երգարանի<sup>21</sup> մէջ կան նոր ժամանակի ապղեր, ուր երգիչը (աշուղը) մէկ պող հայ. և մէկ առղ պրս. երգեր է: Դեռ այսօր այստեղ Թաւրիզի մէջ կայ նոյն բանը. Թաշճեան<sup>22</sup> գերատանը՝ որ նաև երգէն է, անցեալները հանգէսի մը մէջ երգեց իր գրան մէկ երգը, որուն իւրաքանչիւր տան ա. տողը հայ էք, բ-ը թուրք, չ-ը վրացի,

գուշ ռուս, չորս լեզունվագ։ Հին ժամանակ ալ եղած ըլլալու է, կերպնեմ. այս ժամանակն ամէն ծառայութիւն մատացանել պատրաստ եմ: Խնդրուկոն կէտերը կրնամ նոյն իսկ տեղույս պարսիկ մոլլաներուն հարցնել: Եթէ կուզէք կրնանք նաև դիմել տեղույս բժիշկներէն ուսումնական ֆախոր-ուլ-Աթլըրբա (Պարծանք բժշկաց) անուն անձին, որ Շահնշահի հրամանով կկազմէ պարսկերէն, Գրանսերէն, անդիւրէն և ոռուսերէն չորեքիցիւեան լիակատար բառարան մը և այս առթիւ կարդացած ու բառաքաղած է ամրուզ պարսիկ գրականութիւնը: Անձամբ ծանօթ եմ և կրնամ պէտք եղածը հարցնել իրեն:

Վկայք Արեւելիցը<sup>21</sup> հրամարակեր են. բայց առանց Միաբանի յառաջաբանին. դրած են միայն մէկ քանի էջ տեղեկութիւն՝ նոր հրամարակչին կողմէ: ուստի դուք ինչ որ ունիք՝ այն է: Ես ալ այդքանը տեսած էի 1908 թվուն՝ հանգուցեալ հողինակին քով: Յառաջաբանը չէր ալ գրած: Նոր ապագրութիւնը ձեռքո անցաւ: Հոս կվաճառուի:

Վանէն փոխադրուած հազար ձեռագիրք այժմ կգտնուին յէջմիածին<sup>22</sup>: իսկ էջմիածնի 4000 ձեռագիրք կզանուին Մոսկուայի Հայոց եկեղեցւոյն մէջ: Կըոռուի թէ ապահով տեղ է և զեռ մարդ ձեռք չէ դիպցուցած<sup>23</sup>: Ի դէպ կյիշեմ որ էջմիածնի ձեռադրաց մէջ (4000 ձեռագիրներն ալ էջ առ էջ թերթած և ամրոզին մէջ դանուած բոլոր տաղերը ցուցադրուած եմ) տեսած եմ մէյ մէկ հատոր ապահափեալ Պատարան, Գործք Առաքելոց, մէյ մէկ առաջ ալ Օրացոյց (տումար) և Աշխարհագրութիւն:

Եթէ կարեոր հիմարէք Հանդէսի լուրջրու բաժնին մէջ մտցուցէք տեղույս Հայկական համալսարանին բացումը: Հայտատանէն հոս ապաստանած էին շատ մտուած ուժեր, ասոնցմէ պը. Ծուրէն Արրահամեան հախածեռութիւն յանձն առա բանալու Շիարիզի Հայկական Հօմալսարանը: արդէն երկրորդ ամիսն է որ բացուած է: Ուսանողներն 200ի չափ են. կուանդուի Հայոց լեզու, Գրանսերէն, Անդիւրէն, Պարսկերէն, Լեզուարանութիւն, Հայոց պատմ., Ընդհ. պատմ., Արեւելքի պատմ., Հայոց գրականութիւն (Նոր), Սոցիոլոգիա, Բազաք. անտեսագիրութիւն և Մանկավարժութիւն: — Դասախոսներն են՝ բացի նույսաէս, Ռ. Արրահամեան, Ն. Աղբալեան, Ա. Շահնշազարեան, Կ. Գիոնեան, Մ. Քարամեան, Ա. Գասպարեան, Ա. Յովհաննիսիս և Սարգիս Սուքիանեան: Դասախոսութիւնները տեղի կունենան Լիլաւայի մեծ դպրոցին մէջ, կէսօրէն յիշոյ, ժամը 3-6:

Կողջաւնեմ սիրով և յարգանօք Զեզ և բոլորիդ. յատուկ բարեներս Հ. Տաշեանին և Հ. Վարդանեանին:

**Մարտ 1, 1922, Թաւրիզ**

**Հերդ Հ. Ազմանեան**

Հ. Ա. Վարդանեան, Բառաբննական դիտուրիւններ: Դասական տշան, Ա (1913), Բ (1914), Գ (1921):

Անք առաքած գրքերի ցուցակը ՀԱ, 1922, մարտ - յունիս միացեալ համարի կողքերում է Հայագիտական հրամարակութիւնք, առաջաւած խմբագրութեանու ցանկում:

Հապահ Բարգավառուն Պատմութիւն, էջմիածին, 1921 (անունամ. 18, ժամ. 35):

ՀԵ՛ւ նամ. 18, ժամ. 19:

Հայացիէն նոր բառե Հապահ Բարգավառուն Պատմութիւն մէջ, (անունամ. էջմիածին, 1921), մաշ-

մագիստր. 1922, թ. 6, 8, 9:

Հետեւան, Միջեւանացեան (1866-1948), Արքայատականի թեմի առաջնորդ 1912ից մինչեւ

մակեր, աշխատավորների եկեղինակ, ինչ. Հայոց եկեղեցական իրաւունքը (գրքը 1-2՝ 1903 - 1905): Դրան մասին տե՛ս պր. Ա. Վարդանեան, Անդիմի նախեալք, Գերութ., 1969, էլ 133-145:

Այս է տեղերի կանոնագործին Հ. Ա. Դ. Ապահանակի տշանի, Թաւրիզ, պատ. Արար. Հայոց թիւ, 1917, գ. էջ, այս գրադարան, թ. 8: Պատմ. թիւն համար նշենք նաև համայնքա-

թիւն: Հայութանի Կոմիտարաքան, կամացնենի և վայելանի ամ. 28 նույնի 1921թ.՝ Թաւրիզ, Ար-

խորհրդի). Յարսթիքնեան Առ., Անցներ Առաջականում 1918 թին, Թաւրիզ, ապ. Ասրաք. Հայ յաց թմբ., 1919, 80 էջ, «Այդ գրադարան», թ. Ա:

\* Բաղէն Սիմէռն, Արևիկի մըմունիներ, Դաւրիզ, 1917:

\* Արդ Թափի, (Թաւրիզ, 1921\*), 12 էջ:

10 Այս թերթերի անոները չեն մտել Հայկ՝ սպվ. հանրագիտարանի մէջ. Այդոր Թաւրիզում հրատարակուել է հաւանաքար 1915-1921 թթ., իսկ շանդի մասին տե՛ս նամ. 20:

11 Առնա զիրէ, (հրատարակութիւն Հեռակայաստանի կառավարութեան), Պարիս, ապ. Ամառնեան, 1921, 115 էջ:

12 Բնագրում այսպէս, վիճ. բուժէկիները:

13 Ժերովանի փօխանակ բառե հայերէն մէջ, ԱԱ, 1947-1949, առանձնատիպ 1951, 183 էջ:

14 Էջմիածնի Նորակար հայագիտական ժողովածուի 1919 թ. համարաւմ, որ նուրբուած է հայերէն դրերի գիւտի Անամեայ և հայ. տպագրութեան 400ամեայ յորելեաններին, Գարեգին Յովսէփինը (յետոյ Կաթողիկոս Մաքի Տանն Կիրիկիոս) հրատարակել է միաւոք հայ նամագրեանն, որից սուսաւել է ԱԱ, ինչպէս նշուած է Հայոց դրերը նրա աշխատութեան մէջ, էջ 349, ծան. 1:

15 Հաւանաքարութեան ժաղովրդական կամիսար Առա Յովհաննիսիան, տե՛ս նամ. 18, ծան. 19, և ՏԵ՛Ս նամակ 18, նոյնպէս ծան. 27:

16 Հ. Յ. Տաշեան, Տացակ հայերէն ձեռագրաց մասենադարանի Միիրաւեաց ի Վիեննա, 1895, մետագիր 1103 էջ.

17 ՏԵ՛Ս նամ. 3, ծան. 8:

18 Գրիգորի Ալբամարգի (1904-1944 մօմ.), «Տաղ Առաւածատուր Կիթյեցւոյ նահատակի. վաճառական մի հայ և յայտ հարտառան ...», հրատ. Կ. Գոստաննեանց, էջ 86-91. տե՛ս նամ. Հ. Ակինեան, ԱԱ, 1915, էջ 52, որը յուսաւմ է նոյն վերագրարք:

19 Անլիս Հայաստանի (Երգարան), հրատ. Գրիգորեանց քահանայ, 1896:

20 Մահեան Մկրտիչ (1885-1918), գերաւան 1906-1916 Թիֆլիսում, 1917 մինչև մահը Թաւրիզում. Թեհրանում ագրբեշաներէն բեմադրել է ԱԱ. Ծիրցանզադէի Պատուի համար և հաւանու գրամաները:

21 Ավկայի Արևիկից վարքադրական ժաղովածուի առաջին հետազոտացը և հրատարակիչը եղել է Գ. Տէր-Մկրտչեանը (Միքան):

22 Գ. Ա. Արքահաննեան, Սատենդարան, Եր., 19-2. էջ 12\* 1915 թ. (էջմիածնի) Մատենադարան ևն մտեան Վարչութեականց բերած (Լիմ. Կոտոց, Աղթամար, Վարագ, Վան և այլն) ինչպէս նաև Թաւրիզից սահաւած 1828 ձեռագիրը:

23 Ն. ա., էջ 13\* 1920 թ. գեկտեմբերի 17ին պատականացւում է էջմիածնի Մատենադարանը, 1922 թ. ապրիլին Մոսկույից Հայաստան են վերադարձում 4660 ձեռագիր, որոնք 1915 թօւականին Մոսկուա էին տարօւել պատերազմական արհաւիրքներից զերծ պահելու մտանդութեամբ և պահում էին հայկական եկեղեցւում: Այս ձեռագիրն միանում են Մատենադարանու գտնուած 1730 ձեռագիրը, որոնք հաւաքուել էին 1915-1921 թթ. ընթացքում:

## 20.

(Թաւրիզ, 26 օգ. 1923)

Գերապատիւ Հ. Ակինեան,

Մեծապէս շնորհակալ եմ Ձեր զգացմանց համար: Ներփակ նամակը տարի ուր որ պէտք էր. համաձայնեցուցի նուիրել նաւիղը մատենադարանիդ, փոխարքն ստանալու պայմանով՝ հետեւալ գրքերը. 1) Գետրոս Դուրեսան, Ընթիր Եներւածներ, Վիեննա 1922. — 2) Մատիկեան, Կոօնի ծագումը և դիցաբանութիւն, Վիեննա 1920. 3) Ս. Յակոբեանի գրած՝ Դուրեսանի ուսումնասիրութիւնը, որ արտապուած է անշուշտ Հանդէսէն: — Իր հասցէն է Mr. Mirza Méléik-Safatianian, Collège américain, Tauris, Դժուարութիւնը անկէ էր, որ ինչքը եղած է նոյն թերթին աշխատակից և զանազան յօդուածներ ունի մէջը, հանոյք մ'էր իրեն համար երբեմն երբեմն կորդալ: Հիմայ զրկուած է այդ հանոյքին: Ինչ որ է, երբ վերայիշեալ երեք գրքերը ապահովեալ ծրաբով զրկէք իրեն, ին հասցէցը կմոռնայ և նորը կ'սկսի: Միւս ուսրիներ ունիցիր է, բայց անեցիք գործածեր ոչնչացուցիք են իր բացակայուած քանակուակ:

Ուրիշ ուրախ լուր մ'ալ տամ. Զանգի հաւաքածոն ամբողջացուցի. երկու բարի պարոններ հաճեցան իրենց կիսատ հաւաքածոն քանդել և տալ ինձ զանազան թռւեր. — Զանգը հրատարակուած է հետեւալ ցատկուաւքներով:

Զանգ 1910 և ամ. թիւք 37

» 1911 թ »	» 33
Միւգ 1912 և »	» 34
» 1913 թ »	» 20
» 1914 գ »	» 28 <sup>o</sup>
» 1914 գ (sic)	» 39
Զանգ 1918 ը (sic)	» 3 (Միւգին)
» 1919 թ »	» 48
» 1920 ժ »	» 33
» 1921 ժ ա »	» 27
» 1922 ժ բ »	» 5 (դադրեցուած պետութենէ)

Ուրեմն 1915-1917 չէ հրատարակուած, բայց տարեթիւը պահուած է և 1918 եղած է ը ամ. այսպէս հաստատեց խմբագրապետ ու հիմնադիրը՝ Ա. Տէր-Վարդանեան, որու հաւաքածոն և համար պահան է: Իմ զրկած հաւաքածոյիս մէջ կպահին միայն չորս թիւ, որ է:

1919 թ. 13

1921 ժ. 3, [թ] 12 18

Ասոնց համար գրեցի Մարտղա՛ բարեկամի մը. «Ր սրոնէ և եթէ դանէ ուղարկէ ինձ, Մարտղա՛ բաւական բաժնուարդ կար Զանգ թերթի: Ասկա առաջնական գրադարանի վրայ գրուած» Մարտղայէն ստացայ և զրկեցի Զեղ վերջին ծրարիս մէջ:

ՀՀայոց գրերը՝ յառաջարտն չունի. աւելի ճիշտ՝ արդէն տպուած է. շնորհակալ եմ որ Հ. Տաշեան ընդունած է ծոսաւ, Գուլով Զեր ոչխատակցութեան՝ յատկապէս ծածկագրերու մասին, պատիւ պիտի ըլլայ ինծի այն: Աւելցուցեք ինչ որ կիափագիք, անշուշտ միշտ առանձին նշանավ: Brossetի մասին ունեցած տեղեկութիւնն է. Տջ 90. բայց հոն բազմութիւ ծածկագրութեանց մասին կիսուուի (19 տեսակ), մինչդեռ Զեր գրածին համեմտած ընդ ամէնը մէկ տեսակ է: Այս մասին ուլ խնդրեմ կարենոր լուսարանութիւնը դնէիք գրքին մէջ, — Գրքին վրիպակները անշուշտ մասնաւոր ցանկով մը կդնէք ինչպէս որ պէտք է: Իսկ նոր տպուելիք մասերուն համար, սրոնք շատ բժամնագիր ուշադրութիւն կը պահանջն, յտակապէս կիսդրեմ որ պէտք եղածը չզլանաք: — ինչո՞ւ արգեսք մինչև հիմա չհրատարակուեցաւ նոր-Բայազէտի ձեռագրաց ցուցակս, որ կարծիմ բոլորովին պատրաստ է: — Հայաստան երթալուս պէս տուանձին յայտարարաւթեամբ բոլորովին պատրաստ է: Հայաստան երթալուս պէտք է հաւաքել Զեղ համար. համալուսարանը, ինչ-կաչխատիմ բոլոր թերթերն ու գրքերը հաւաքել Զեղ համար. համալուսարանը, պէտք է լսեմ, ունի 240 ուսանող, որոնցմէ 60 հոգի լեզուարանութիւն կը սորվին, պէտք է լսեմ, ունի 240 ուսանող, որոնցմէ 60 հոգի լեզուարանութիւն կը սորվին, այսինքն ուղղակի իմ աշակերտներս պիտի ըլլան: յոյս ունիմ անոնք ալ կօգնեն այս հաւաքման մէջ: Ա. Տէր-Յակոբեանը իմ հին աշակերտս է և հիմայ կջմիածին կդառնուի:

Երեանի հասցէս բոլորովին պարզ է:

Էջ. Աճառեան

Երեանի հայոց Համալսարանը:

Նամակս զրկելէ առաջ ճամբարայ հանած եմ երկու (2) կապոց, որոնց մէջ կդառնուին նողակարը, Զանգերը և զանազան գրքեր: Յետոյ աւելցուցի նոր կապոց մը, սրաւն մէջ են նաւիլը, Ըէյտերի հեռագիրները և Պայիա: Վերջին երկուքը թերթեր են որ հրատարակուեր են ժամանակ մը առաջ. ոչ մէկը կատարեալ հաւաքմանը մը չունի անոնցմէ: Աւղարկեցի ինչ որ կրցայ հաւաքել: Անցեալը անկարելի քածու մը չունի անոնցմէ:

եղաւ ինձ համար, Մեկնելէս տռաջ Զեզի ուրիշ մէկու մը հասցէն կուտամ, այնպիսի մէկը՝ որ կարենայ թմ գործո շարունակել. Կթղթակցիք՝ անոր հետ և յոյս ունիմ որ կրնաք բաւական բան ստանալ իր ձեռքով, Անիկա ալ ծակուժուկեր փնտառելու սպորտաթիւն ունի:

Նամակիս հետ կուզարկեմ վերջին հրաժեշտի ողջոյնս. պիտի մեկնիմ օդոս տասի 30ին:

Այս թերթը հրատարակուած է նաև 1922 թուրին 6 թիւ. և այս թուրի խափանուած է պետութեան կողմէ. այս օրէն մինչեւ այսօր ոչ մի թերթ (հայ կամ պարսիկ) չունի իրաւունք հրատարակուելու քաղաքիս մէջ:

26 օգոստոս 1923

Թաւրիզ

Զերդ

Հ. ԱռԱԽԵՍԱՆ

<sup>1</sup> Արմեն Ցակորեան (1880-1942), սահմանական է Թիֆլիսում և Եռևյացարիայում, գրականագէտ, 1922-1924 թ. Վիեննայում հրատարակել է «Արեդ» հանգեւոր, 1918ին հրաժարակել է Դաշնակցական ցուցանկութիւնը, 1924ին ներազգակել է Սովոր Հայաստան, Համալսարանում դասաւանդէ և արևմըտական գրականութիւն մինչեւ 1958, երբ «Անհատի պաշտամունքի շրջանի զուհերից է» գարձել (ըստ Լ. Գ. Ղարիբյաննեանի, Երևանի պետական համալսարան, էջ 214): Նաև «Պետրոս Դաւթեան, նրա կեանքն ու երշերը» ուսումնաւորութիւնը լոյս է տեսել ՀԱ, 1921-1922 թիւ:

<sup>2</sup> Հայոց առ Գեր. Հ. Յ. Տաշիան, Հիմնադիր հայ հնագրութեան, ի նշան խորին յարգանաց, (Հայոց գրերը գրքի տիտղոսաթերթից յետոյ):

<sup>3</sup> Marie-Félicité Brossot, 1802-1880, Ֆրանսիացի հայագէտ, բանասէր, որ երկար ժամանակ ապրել ու գործել է Գետերքուրդում. կենսագրութիւնը և հայագիտական գործերի ցանկը տե՛ս Մարտիրոս Մինասեան, «Պատմա-բանագիրական հանդէս», Եր., 1967, 1, էջ 198-212:

<sup>4</sup> Հայոց գրերը գրքի վերջում՝ Ըստի գրիպակները երեք էջանց ցանկ:

<sup>5</sup> Առանձին հրատարակուեց 1924ին:

<sup>6</sup> Յաշորդ նամակները ցոյց կը տան, որ Հր. Աճառեանը չէր պատկերացնում իր հանդիպելիք դրութիւնը. և ոչ միայն նա:

<sup>7</sup> Հ. Ն. Ակինեանը 20ական թթ. եղել է ոչ միայն ՀԱի խմբագիրը, այլև վանքի մատնաշարանապետը, ինչպէս երեսում է ՀԱում գրքերի և մատնադարանին վերաբերող կոչեցից և շնորհակալական տողերից:

(Եարունակելի՝ 9)

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

